չայի գաւառում։ Այս շրջանի սահմաններն են հարաւային կողմից Գեօկչայի առաջին լեռնագօտին և Շիրուանի լեռները, իսկ հիւսիսային կողմից հետեւեալ գիւղերը՝ Ալի Զանլի, Խալաչ, Զալի, Շիլեան I և II Մուրադխան և Քիւրդամիր, արեւմտեան և արեւելեան կողմից՝ երկու գաւառների սահմանները։ Այս գաւառներում պարապում են ինչպէս այգեգործութեամբ, նոյնպէս և պտուղների մշակութեամբ։ Ղուբու գաւառում այգիները բռնում են լեռների արեւելեան լանջերը, որոնց վերին մասերում այգիները համարեա բացառապէս կազմուած են պտղատու ծառերից, բայց որքան իջնում են դէպի ծովը, այնքան էլ աւելանում է խաղողի այգիների թիւը, իսկ վերջին ժամանակներում Շաբրանում ծովի ափով ձգուել են ընդարձակ խաղողի այգիներ։ Լէնքորանի գաւառում այգիները բռնում են երկու գաւառակներ, ծովափնեայ և լեռնոտ մասերը գաւառի։ Առաջին գաւառակում նոքա բռնում են ծովափնեայ անտառոտ մասերը, իսկ երկրորդում մերկ լեռները։ Երկու մասերում եւս պարապում են գլխաւորապէս պտղա - այգեգործութեամբ։ Զաւատի գաւառում այգեգործութիւնը զարգացած չէ, այգիները, սակաւ քանակութեամբ, պատահում են այն գիւղերում, որոնք շինուած են Քուրի և Նորա ճիւղ Ակուշի ափերում, սկսուած գետաբերաններից մինչեւ Սալիան աւանը։

Ներկայ տարում պտուղների քանակութիւնը, բացի խաղողից, վատ էր, մանաւանդ Ղուբու գաւառում, ուր (ծաղկի) ծառերի ծաղկելու միջոցին եղան մի քանի սառնամանիքներ։ Այգեկութը ընդհակառակը շատ լաւ էր, մանաւանդ Շամախու գաւառում, բայց այս տեղ էլ դժբաղդաբար այգիները վնասուեցան կարկուտից, որ պատահեց 1891 թուի գարնանը. Մատրասա գիւղում, որ յայտնի է իւր գինիներով, վնասուեցան գիւղի հիւսիս արեւմտեան այգիները մօտ 200 դեսեատին տարածութեամբ։

ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ

Զկնորսատեղիները Բագուի նահանգի համար միշտ կազմում էին արդիւնքի չափազանց նշանաւոր աղբիւր, բայց նրանցից միշտ